

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՉԳՐԱՆՑՎԱԾ
(ՉՀԱՇՎԱՌՎԱԾ) ԲԵՌՆԱՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ
ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔՈՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՔ
ՏԱՐԱՆՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՄ ԱՌԱՆՑ ՏԱՐԱՆՑՄԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՄՈՒՏՔ
ԳՈՐԾՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ
ՀԱՐԿԻ ՆՎԱԶ ԴՐՈՒՅՔԱԶԱՓ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Ծ ՈՒ Մ

«-----»----- 2025 թվականի N -Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՉԳՐԱՆՑՎԱԾ (ՉՀԱՇՎԱՌՎԱԾ) ԲԵՌՆԱՏԱՐ
ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔՈՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՔ ՏԱՐԱՆՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՄ ԱՌԱՆՑ
ՏԱՐԱՆՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿ
ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ
ՀԱՐԿԻ ՆՎԱԶ ԴՐՈՒՅՔԱԶԱՓ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Հարկային օրենսգրքի
191-րդ հոդվածի 1.1 մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը
որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության տարածքով երրորդ
երկրների տարածք տարանցման նպատակով կամ առանց տարանցման
Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործող ճանապարհային

հարկ վճարողներին ճանապարհային հարկի վճարումից ազատելու նպատակով բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գրանցման (հաշվառման) երկիրը, տեսակը և քանակը՝ համաձայն Հավելված N 1-ի:

2. Սահմանել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (չհաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով (այդ թվում՝ կցորդների և կիսակցորդների) Հայաստանի Հանրապետության տարածքով երրորդ երկրների տարածք տարանցման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածք մուտք գործող ճանապարհային հարկ վճարողների նկատմամբ ճանապարհային հարկի նվազ դրույքաչափ կիրառելու համար բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գրանցման (հաշվառման) երկիրը, տեսակը և քանակը՝ համաձայն Հավելված N 2-ի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: Սույն որոշմամբ հաստատված Հավելված N 2-ը գործողության մեջ է դրվում Իրանի Իսլամական Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետությունում գրանցված (հաշվառված) բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների նկատմամբ փոխադարձության սկզբունքով նույն կարգավորումները կիրառելու մասին ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ք.Երևան

Հավելված N 1

ՀՀ կառավարության

«---»---2025 թվականի N -Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՔ
ՏԱՐԱՆՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՄ ԱՌԱՆՑ ՏԱՐԱՆՑՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿ
ՎՃԱՐՈՂՆԵՐԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ԲԵՈՒՆՏԱՐ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ (ՀԱԾՎԱՌՄԱՆ)
ԵՐԿԻՐԸ, ՏԵՍԱԿԸ ԵՎ ԶԱՆԱԿԸ**

1. Բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գրանցման (հաշվառման) երկրները՝ Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպության (ՍԾՏՀ) և Տրանսպորտի նախարարների եվրոպական կոնֆերանսի (ՏՆԵԿ) անդամ պետություններ, որոնց բեռնափոխադրողները «BSEC Permit» և «CEMT» բազմակողմ քվոտայի համակարգերում միջպետական բեռնափոխադրումներ իրականացնելիս Հայաստանի Հանրապետություն մուտք են գործում համապատասխանաբար «BSEC Permit» և «CEMT» թույլտվություններով:

2. Բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների տեսակը՝ մինչև 44 տոննա ներառյալ թույլատրելի առավելագույն զանգված ունեցողներ:

3. Սույն հավելվածի 1-ին կետում նշված երկրի գրանցման (հաշվառման) և 2-րդ կետի պահանջներին բավարարող բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների քանակը, որոնցով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելիս ճանապարհային հարկ վճարողները ազատվում են ճանապարհային հարկի վճարումից՝ անսահմանափակ:

Հայաստանի Հանրապետության վարչապետի

աշխատակազմի ղեկավար

Ա. Հարությունյան

Հավելված N 2

ՀՀ կառավարության

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԳՐԱՆՑՎԱԾ (ԶՀԱՇՎԱՌՎԱԾ) ԲԵՌՆԱՏԱՐ
ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԵՐՐՈՐԴ ԵՐԿՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՔ ՏԱՐԱՆՑՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՄՈՒՏՔ ԳՈՐԾՈՂ
ՃԱՆԱԴԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ՃԱՆԱԴԱՐՀԱՅԻՆ ՀԱՐԿԻ
ՆՎԱԶ ԴՐՈՒՅՔԱԶՊՓ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԲԵՌՆԱՏԱՐ
ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ (ՀԱՇՎԱՌՄԱՆ) ԵՐԿԻՐԸ,
ՏԵՍԱԿԸ ԵՎ ՔԱՆԱԿԸ**

1. Բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների գրանցման (հաշվառման) երկիրը՝ Իրանի Իսլամական Հանրապետություն:

2. Բեռնատար ավտոտրանսպորտային միջոցների տեսակը՝ 30-ից մինչև 44 տոննա ներառյալ թույլատրելի առավելագույն զանգված ունեցողներ:

3. Սույն հավելվածի 1-ին և 2-րդ կետերի պահանջներին բավարարող բեռնատար ավտոտրանսպորտային միջոցներով՝ անկախ դրանց քանակից, Հայաստանի Հանրապետության տարածքով դեպի երրորդ երկիր տարանցման նպատակով Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու դեպքում ճանապարհային հարկ վճարողների համար ճանապարհային հարկի դրույքաչափը նվազեցվում է 120 ԱՄՆ դոլարին համարժեք դրամի չափով՝ տվյալ օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից հրապարակված ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի միջին փոխարժեքով:

Հայաստանի Հանրապետության վարչապետի

աշխատակազմի ղեկավար

Ա. Հարությունյան